Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Փիլիսոփ. գիտ. դոկտոր Մ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Քսաներորդ դարի սահմանագլուխը նշանավորվեց կապիտալիզմի նոր փուլի՝ իմպերիալիզմի կազմավորումով։ Իմպերիալիզմի պատմական նշանակությունն այն է, որ բարձրագույն աստիճանի հասցնելով կապիտալիզմի ծնած արտադրողական ուժերը, նա ծայր աստիճան սրում է նրան ներհատուկ հակասությունները և հող ստեղծում կապիտալիստական կարգերի անմիջական կործանման և արտադրության հիմնական միջոցների մասնավոր սեփականությունից ու մարդու շահագործումից ազատագրված նոր հասարակական կարգ հաստատելու համար։

Իմպերիալիզմի զարգացման օրինաչափություններն առաջինը հասկացավ և գիտականորեն վերլուծեց Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մեծ աշակերտ Վլադիմիր Ռլյիչ Լենինը, որն իմպերիալիզմը բնութագրեց որպես «փտող», «մահացող» կապիտալիզմ, որպես «պրոլետարական հեղափոխության անմիջական նախօրյակ»։ Բացահայտելով սոցիալիստական հեղափոխության անխուսափելիությունը և նրա իրականացման կոնկրետ ուղիներն իմպերիալիզմի դարաշրջանում, Վ. Ի. Լենինը հանգեց այն եզրակացության, որ «սոցիալիստական հեղափոխությունը չի կարող այլ կերպ տեղի ունենալ, քան իբրև մի դարաշրջան, որ միացնում է պրոլետարիատի քաղաքացիական կռիվը բուրժուազիայի դեմ առաջավոր երկրներում և մի ամբողջ շարք դեմոկրատական և հեղափոխական, այդ թվում ազգային-ազատագրական շարժումներ, չզարգացած, հետամնաց և ճնշված ազգերի մեջ»[1]։ Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, դա ուղղակիորեն բխում է նրանից, որ կապիտալիզմն անհամաչափ է զարգանում, բարձր զարգացած և իմպերիալիզմի աստիճանին հասած ազգերի կողքին պահպանում է գաղութակալված, տնտեսապես շատ թույլ և չզարգացած կամ դարավոր ճնշման հետևանքով հետ մնացած ազգերի գոյությունը։

Եվ Վ. Ի. Լենինն իր ամբողջ գործունեություն ընթացքում, մշակելով սոցիալիստական հեղափոխության տեսության հիմնական պրոբլեմները, միաժամանակ առանձնահատուկ ուշադրություն դարձրեց ճնշված ու գաղութակալված ազգերի կյանքի, պատմական պրոցեսում նրանց խաղացած դերի ու սոցիալիստական հեղափոխությանը նրանց մասնակցության հարցերի լուսաբանմանը։ Վ. Ի. Լենինի երկերի ուսումնասիրությունից ակնհայտ է, թե որքան համակողմանի ու խորն է նա անդրադարձել լեհերի և իռլանդացիների, հնդիկների ու չինացիների, ուկրաինացիների ու բելոռուսների, վրացիների ու հրեաների և բազմաթիվ այլ ժողովուրդների սոցալական և ազգային ազատագրական շարժման ամենաբազմազան հարցերին։

Լինելով համաշխարհային պրոլետարական շարժման և մասնավորապես համառուսական կոմունիստական շարժման ոգեշնչողն ու մարտական զեկա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 66։

վարը, Վ. Ի. Լենինը չէր կարող իր տեսադաշտից դուրս թողնել հայ ժողովրդին, որը XIX դարի վերջին և XX դարի սկզբին թեև այնքան էլ մեծաթիվ չէր ու վճռական ուժ չէր համաշխարհային սոցիալիստական հեղափոխության բախտը որոշելիս, սակայն աշխարհի սակավաթիվ հնագույն ազգերից մեկն էր և ոչ միայն յուրատեսակ էր իր կյանքի պայմաններով, այլև անմիջականորեն առնչվում էր պատմական դեպքերի առաջամասի վրա գտնվող մի շարք խոշոր ժողովուրդների, հատկապես ռուս ժողովրդի պրոլետարական շարժման հետ։ Հայ ազգի այն ժամանակ խաղացած դերի բնութագրման համար կարելի է գործածել Վ. Ը. Լենինի հայտնի ասույթը, որ կապիտալիզմի դեմ պայքարում ինքնուրույն գործոն լինելու անզոր փոքր ազգերը միաժամանակ կապիտալիզմի դեմ իսկական ուժի՝ սոցիալիստական պրոլետարիատի հանդես գալու խմորիչներից մեկի դեր են կատարում։

Այդպիսի «խմորիչներից» մեկն էր հայ ազգը՝ իր կյանքի ուրույն պայմաններով։ Հայաստանն այդ շրջանում ոչ միայն գաղութացված էր, այլև բաժանված էր երկու կայսրությունների միջև և հայ ժողովուրդը տառապում էր, Ֆր. Էնգելսի արտահայտությամբ, թուրքական Սուլթանի և ցարական բռնակալության Քարիբդայի միջև։ Ընդ որում թուրքական կայսրության լծի տակ էր Հայաստանի և հայ ժողովրդի մեծ մասը։ Թուրքական բռնապետների վայրագ ճնշումն ու թալանը, պարբերական ջարդերը իրական վտանգ էին ստեղծում հայ ազգի խոշորագույն հատվածի բուն իսկ ֆիզիկական գոյության համար։ Հայ ժողովրդի բազմաթիվ ազատագրական ելույթները ճնշվում էին անասելի դաժանությամբ։

Ցարական կայսրության կազմի մեջ մտնող Հայաստանի արևելյան հատվածը և հայ ազգության մի խոշոր զանգվածը համեմատաբար ապահով վիճակում էր գտնվում։ Հայկական կապիտալիզմը միահյուսվում էր ռուսական կապիտալիզմի հետ և զգալի դեր խաղում ամբողջ կայսրության կյանքում։ Անդրկովկասի խոշոր քաղաքներում կազմավորված հայկական արդյունաբերական պրոլետարիատը քայլում էր համառուսական հեղափոխական բանվոր դասակարգի առաջին շարքերում։

Դարավոր գաղութակալման, ջարդերի ու ճնշման հետևանքով հայ ժողովրդի մի զգալի հատվածը տարագիր էր աշխարհի շատ ու շատ հեռավոր երկրներում։ Եվ այդ տարագրությունը, մասնավորապես Թուրքիայի կառավարող շրջանների հայասպան քաղաքականության հետևանքով, ոչ թե նվազում էր, այլ անշեղ աճում։

Այսպիսով, ներքին և արտաքին շահագործման, թալանի ու տնտեսական կյանքի քայքայման հետևանքով բազմադարյան մշակույթ ունեցող ժողովրդի մեծ մասը XIX դարի վերջին խարխափում էր խավարի ու տգիտության մեջ, բայց նրա առաջադեմ ուժերն անընդհատ ընդվզում էին բռնակալական ստրկացնող ռեժիմների դեմ։ Իր կյանքի ուրույն պայմաններով հայ ազգը ներգրավվում էր համաշխարհային-պատմական պրոցեսի առաջընթացին։

* * *

Իր հեղափոխական գործունեության արդեն վաղ շրջանից սկսած Վ. Ի. Լենինը քայլ առ քայլ ծանոթացավ հայ ժողովրդի վիճակին և նրա առջև ծառացած մի շարք հիմնական խնդիրներին։

Այդ ծանոթության առաջին աղբյուրը համառուսական հեղափոխական շարժման մասնակից բազմաթիվ հայ հեղափոխականների հետ համատեղ գործունեությունն ու անձնական շփումն էր։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին պրոլետարական հեղափոխական-ազատագրական շարժումը Ռուսաստանում և՛ իր առջև դրվող նպատակներով, և՛ իր մասնակիցների կազմով ինտերնացիոնալ բնույթ ուներ։ Ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների, հրեաների, վրացիների և շատ այլ ազգությունների ներկայացուցիչների հետ միասին այդ շարժման ակտիվ մասնակիցներ էին նաև մեծաթիվ հայ գործիչներ և՛ բուն Հայաստանում, և՛ կայսրության այլ ու այլ մասերում, ուր նրանք կամ բնակվում էին կամ կրթություն ստանում (Վրաստան, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս, Մոսկվա, Պետերբուրգ, Ռոստով, Աստրախան և այլուր)։

Հայ հեղափոխական գործիչների հետ Վ. Ի. Լենինի անձնական ծանոթությունն ու համատեղ գործունեությունը սկիզբ առավ Սամարայում (այժմ Կույբիշև) գտնվելու ժամանակաշրջանում։ 1893 թ. Վ. Ի. Լենինը ծանոթանում ու մտերմանում է հեղափոխական գործունեության համար Սամարա արտաքսված Ի. Ք. Լալայանցի հետ։ Իր գործունեության պետերբուրգյան շրջանում նա հանդիպում է Ռ. Կնունյանցին, իսկ 1903 թ.՝ Ստ. Շահումյանին, որոնց հետ կապվեց գաղափարական և անձնական ամենասերտ կապերով։ Հետագա տարիներին Վ. Ի. Լենինը ծանոթանում ու մտերմանում է բազմաթիվ հայ ականավոր հեղափոխական գործիչների՝ Ս. Կասպարովի, Ս. Տեր-Պետրոսյանցի (Կամո), Ս. Սպանդարյանի, Ալ. Մյասնիկյանի, Ա. Զուրաբյանի, Ս. Մարտիրոսյանի (Վառլամ Ավանեսով), Վ. Տերյանի, Ս. Տեր-Գաբրիելյանի, Ա. Բեկզադյանի. Լ. Կարախանի, Ռ. Քաթանյանի, Ա. Խալաթովի և ուրիշների հետ։

Վ. Ի. Լենինի և հայ հեղափոխական գործիչների բարեկամությունը լայն շրջանակներ ուներ։ Նրանցից շատերի հետ Վ. Ի. Լենինը կապված էր երկար տարիների համատեղ աշխատանքով, սերտ համագործակցությամբ կուսակցության և նրա կենտրոնական մարմիններում ցարիզմի ու բուրժուազիայի տապալման համար մղվող պայքարում, իսկ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո՝ հեղափոխության նվաճումները պաշտպանելու և սոցիալիստական շինարարության համար ծավալված գործունեության բնագավառում։

Վ. Ի. Լենինն իր նամակներում ու պաշտոնական գրություններում բազմիցս նշել է համառուսական հեղափոխական շարժման մեջ նշանակալի դեր կատարած այդ հայ գործիչների նվիրվածությունը բանվոր դասակարգի ազատագրման վեհ գործին, նրանց անձնական բարձր հատկությունները և իր՝ որպես կուսակցության ու խորհրդային պետության ղեկավարի վստահությունը նրանց նկատմամբ։

Իսահակ Լալայանցի մասին, որի հետ կուսակցական և անձնական մտերմությամբ կապված էր համարյա երեք տասնամյակ, նա նշել է. «Ես ճանաչում եմ Լալայանցին 1890-ական թվականներից՝ որպես մարքսիստի և հետո բոլշևիկի, անկասկած նվիրված հեղափոխական է»։

Բոգդան Կնունյանցի հետ Վ. Ի. Լենինը հատկապես սերտ համագործակցում էր ՌՍԴԲԿ պատմական II համագումարի և 1905—1907 թթ. հեղափոխության շրջանում։ Բարձր դնահատելով Բ. Կնունյանցի ակտիվ մասնակցու-

թյունը II համագումարին (ուր նա մասնակցում էր Ռուսով ծածկանունով) և ներկուսակցական տարաձայնությունների ժամանակ նրա սկզբունքային դիրքը, Վ. Ի. Լենինը գրել է. «Մենք խորհուրդ կտայինք բոլորին, ովքեր ուզում են ինքնուրույնորեն վերլուծել պարտիական պառակտման պատճառները և գտնել նրա արմատները համագումարում, կարդալ և վերստին կարդալ ընկ. Ռուսովի ճառը, որի փաստարկումները փոքրամասնությունը ոչ միայն չհերքեց, այլև նույնիսկ չվիճարկեց»[2]։

Վ. Ի. Լենինն առանձնապես մտերմորեն էր կապված Ստեփան Շահումյանի հետ։ Նա բարձր էր գնահատում Ստ. Շահումյանին և՛ որպես մարքսիստ-տեսաբանի, հատկապես ազգային հարցի խոր գիտակի, և՛ որպես խոշորագույն կուսակցական և պետական գործչի։ Սերտ նամակագրական կապ պահպանելով և շատ անգամ հանդիպելով Ստ. Շահումյանի հետ, Վ. Ի. Լենինը համատեղ քննարկում էր կուսակցության քաղաքականության ու մարքսիստական տեսության մի շարք առանցքային հարցեր։ Պատահական չէր, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Վ. Ի. Լենինի առաջարկությամբ և նրա ստորագրած մանդատով Ստ. Շահումյանը նշանակվեց ամբողջ Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար։ Այդ ժամանակաշրջանում, մասնավորապես Բաքվի կոմունայի հերոսական պայքարի օրերին, Վ. Ի. Լենինը շատ բարձր էր գնահատում նրա գործունեությունը։ 1918 թ. փետրվարի 14-ին Բաքու հղած հեռագրում Վ. Ի. Լենինը գրում էր. «Թանկագին ընկեր Շահումյան։ Շատ շնորհակալություն նամակի համար։ Մենք հրճվանքի մեջ ենք ձեր հաստատակամ ու վճռական քաղաքականությունից»[3]։ Իսկ կոմունայի անկումից հետո Վ. Ի. Լենինը հեռագրում էր Աստրախան. «Որտե՞ղ է Շահումյանը... Դուք գիտեք, որ ես լիովին վստահում եմ Շահումյանին»[4]։

Վ. Ի. Լենինը մի քանի անգամ հանդիպումներ է ունեցել բոցաշունչ հեղափոխական Սիմոն Տեր-Պետրոսյանցի (Կամո) հետ և, անվերապահորեն վստահելով, նրան մի շարք կարևոր կուսակցական ու պետական հանձնարարություններ է տվել։ Կամոյին արտակարգ հանձնարարության համար տրված մի վկայականում Վ. Ի. Լենինը հատկապես նշել է, որ «անձամբ ճանաչում է» նրան և առաջարկել բոլոր մարմիններին լիակատար աջակցություն ցույց տալ։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո հռչակված Ռուսաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կուսակցական ու պետական ղեկավար մարմիններում աշխատում էին երկրի բոլոր ազգություններին պատկանող, այդ թվում և բազմաթիվ հայ գործիչներ, որոնց հետ Վ. Ի. Լենինը անմիջականորեն շփվում էր որպես Աշխատանքի և պաշտպանության խորհրդի, ժողովրդական կոմիսարների խորհրդի և կուսակցության Կենտկոմի քաղբյուրոյի նախագահ։ Մասնավորապես Ալ. Մյասնիկյանի, Վ. Տերյանի, Ս. Մարտիրոսյանի (Վ. Ավանեսով), Ս. Տեր-Գաբրիելյանի հետ Վ. Ի. Լենինը հանդիպել է ոչ միայն գաղափարական, կուսակցական ու համապետական, այլև անմիջականորեն հայ ժողովրդին, Հայաստանին ու Հայկա-

2 Նույն տեղում, հատ. 7, էջ 399—400։
3 Նույն տեղում, հատ. 35, էջ 359։
4 Նույն տեղում, էջ 380։

կան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը վերաբերող մի շարք կարևորագույն խնդիրների կապակցությամբ։

Ակնհայտ է, որ այսպիսի սերտ կապերը հայ հեղափոխական գործիչների հետ, որոնք բարձր կրթված, իրենց ժողովրդի պատմությանը և ներկա վիճակին քաջատեղյակ մարդիկ էին, հնարավորություն տվեցին Վ. Ի. Լենինին ծանոթանալու հայ ժողովրդին, նրա առջև պատմական այն բուռն ժամանակաշրջանում ծառացող արմատական խնդիրներին։

* * *

Վ. Ի. Լենինը ոչ միայն խոշորագույն կուսակցական ու պետական գործիչ էր, այլև հանճարեղ տեսաբան, հասարակական կյանքն ու զարգացումը հետազոտող ու իմաստավորող մեծ գիտնական։ Կապիտալիզմի կործանման ու սոցիալիստական հասարակարգի հաստատման հիմնական օրինաչափությունների բացահայտման համար Վ. Ի. Լենինը խորապես ուսումնասիրեց համաշխարհային, մասնավորապես նորագույն պատմությունը, կապիտալիզմի ժամանակ տնտեսական և, ընդհանրապես, հասարակական զարգացման պրոցեսները, քաղաքական ու փիլիսոփայական մտքի զարգացման պատմությունը։

Հետևողականորեն շարունակելով Կ. Մարքսի տիտանական աշխատանքը կապիտալիզմի զարգացման օրինաչափությունների բացահայտման բնագավառում, Վ. Ի. Լենինը հանգամանորեն հետազոտեց այդ պրոցեսը Ռուսաստանում։ Այս դժվարին գործի ընթացքում նա ուսումնասիրեց մեծաքանակ տնտեսագիտական և պատմական գրականություն, որի շնորհիվ ծանոթացավ ռուսական լայնածավալ կայսրության մաս կազմող երկրների ու ժողովուրդների վիճակին, նրանց զարգացման առանձնահատկություններին և նրանց առջև բարձրացող յուրահատուկ խնդիրներին։

Դարավերջին գրած «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» իր հանրահայտ երկում արդեն Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ բուռն զարգացող ռուսական կապիտալիզմն իր ոլորտի մեջ է առնում կայսրության ծայրամասերը (Կովկասը, Միջին Ասիան և այլն), որոնք Կենտրոնական Ռուսաստանի գաղութներն էին հանդիսանում։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ «Գաղութի այս հասկացողությունն է՛լ ավելի հարմարում է մյուս ծայրերկրներին, օրինակ՝ Կովկասին»[5]։ Նա նշում էր միաժամանակ, որ Ռուսաստանն այդ ծայրերկրները նվաճել է սկզբնապես քաղաքական, իսկ հետո նոր միայն տնտեսական տեսակետից, նրանցից շուկա ստեղծելով իր գործարանների համար։

Վ. Ի. Լենինը Հայաստանի մասին թեև հատուկ աշխատություն չի գրել, բայց նրա բազմաթիվ ասույթներից ակնհայտ է, որ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը նա Հայաստանը համարել է երկու երկրների՝ Թուրքիայի և ցարական Ռուսաստանի գաղութ, որի ազատագրական շարժումն անգթորեն ճնշվել է այդ երկրների բռնակալական քաղաքական ռեժիմների կողմից։ Ինչպես երևում է 1915 թ. նրա գրած մի հոդվածից, նա ոչ միայն Արևելյան, այլև Արևմտյան Հայաստանում ծավալված ազգային-ազատագրական շարժումները, մասնավորապես 1896—1897 թթ. հայկական հուզումները դիտել է որպես ազգային-բուրժուական շարժումներ կամ «ֆեոդալիզմի տարբեր ձևերից

[5] Նույն տեղում, հատ. 3, էջ 769—770։

ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»[6] և դրանք համարել պատմականորեն առաջադիմական երևույթ։

Միաժամանակ Վ. Ի. Լենինը տեսնում էր հայ ժողովրդի իսկական՝ և՛ ազգային, և՛, մասնավորապես, սոցիալական ազատագրությունն իրականացնելու ընդունակ միակ կարող ուժի՝ հայկական պրոլետարիատի և նրա հեղափոխական առաջապահի՝ կոմունիստական կուսակցության կազմավորումն ու զարգացումը։ Նա ոչ միայն տեսնում էր դա, այլև ամենասերտ կապեր էր հաստատում հայկական կոմունիստական կազմակերպությունների և նրանց ղեկավարների հետ։ Դեռևս 1903 թ. Վ. Ի. Լենինը «Իսկրա» թերթում հանդես եկավ «Հայ սոցիալ-դեմոկրատների մանիֆեստը» հոդվածով, ջերմորեն ողջունեց Ստ. Շահումյանի և Բ. Կնունյանցի ղեկավարությամբ հայկական սոցիալ-դեմոկրատների միության կազմակերպումը և բարձր գնահատեց նրա մանիֆեստը, հատկապես ազգային հարցի ճիշտ դրվածք տալու նրա ուշագրավ փորձը։ «Խիստ ցանկալի կլիներ,— գրում էր Վ. Ի. Լենինը,— որ այդ փորձը հասցվեր մինչև վերջ։ Երկու հիմնական սկզբունք, որոնցով պետք է ղեկավարվեն Ռուսաստանի բոլոր սոցիալ-դեմոկրատներն ազգային հարցում, Միությունը միանգամայն ճիշտ է նշել»[7]։

Վ. Ի. Լենինը առանձնապես բարձր էր գնահատում այն հանգամանքը, որ հայկական սոցիալ-դեմոկրատները հանդես էին գալիս որպես համառուսական սոցիալ-դեմոկրատական շարժման և կազմակերպության անխզելի մաս, իրենց չէին անջատում երկրի մյուս ազգությունների՝ ռուս, վրացի, ադրբեջանցի սոցիալ-դեմոկրատներից և համատեղ, միասնական կազմակերպություններում հերոսական պայքար էին մղում։ Ցարիզմի ու բուրժուազիայի դաժան լծից բոլոր ազգերի աշխատավորների ազատագրության համար այդպիսի միասնական պայքարը նա համարում էր ազգային հարցի պրոլետարական լուծումը։

Հայ հասարակական հոսանքներին Վ. Ի. Լենինը ծանոթ էր ոչ միայն անմիջական կուսակցական աշխատանքից, այլև զգալի չափով կուսակցության կենտրոնական օրգանների՝ «Իսկրայի», «Պրոլետարիի», «Զվեզդայի», «Սոցիալ-դեմոկրատի», «Պրավդայի» էջերում պարբերաբար հրապարակվող հոդվածներից ու թղթակցություններից։ Լինելով այդ օրգանների ղեկավարն ու խմբագիրը, Վ. Ի. Լենինը ուշի-ուշով հետևում էր հրապարակվող նյութերին և միշտ քաջատեղյակ լինում լայնածավալ երկրի բոլոր մասերի քաղաքական իրադարձություններին։ Դրա հետևանքով էր, որ նա կարողանում էր այնքան հստակ ու ճշգրիտ կողմնորոշվել բոլոր ազգությունների կյանքում հանդես եկող քաղաքական հոսանքներին ու կազմակերպություններին վերաբերող հարցերում, տալիս էր նրանց դիպուկ գնահատականը։ Այդպես էր նաև հայ հասարակական-քաղաքական հոսանքների հարցում, ուր Վ. Ի. Լենինը անմիջապես նկատեց այսպես կոչված «սպեցիֆիզմի» հանդես գալը և զգուշացրեց կուսակցությանը գործ չունենալ ըստ էության բուրժուա-ազգայնական այդ հոսանքի ներկայացուցիչների հետ։ Այս կամ այն առիթներով ծանոթանալով դաշնակցության գաղափարախոսությանը և նրա գործիչների ելույթներին, Վ. Ի. Լենինը դիպուկ բնութագրեց դաշնակցությունը որպես էսեռական տիպի կազմակերպություն, որը ոչ մի կապ չունի սոցիալիստական շարժման հետ։

---

6 Նույն տեղում, հատ. 21, էջ 175։
7 Նույն տեղում, հատ. 6, էջ 411։

* * *

Հայկական հարցը Վ. Ի. Լենինի առանձնահատուկ ուշադրության առարկա դարձավ առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմին նախորդող տարիներին և պատերազմի ժամանակ։ Այդ ժամանակ Վ. Ի. Լենինի մտահոգության հիմնական առարկան, մի կողմից, պատերազմի անարդարացի, իմպերիալիստական բնույթի, նրա հիմնական մասնակիցների զավթողական պլանների բացահայտումն էր, մյուս կողմից, արևմտա-եվրոպական սոցիալ-դեմոկրատիայի սոցիալ-շովինիստական քաղաքականության մերկացումը և պատերազմի դեմ պայքարող բոլոր ինտերնացիոնալիստական ուժերի սերտ համախմբումը։

Բացահայտելով ռուսական ցարիզմի և անգլիական իմպերիալիզմի զավթողական պլանները, Վ. Ի. Լենինը մասնավորապես ցույց էր տալիս, որ նրանք գերմանա-թուրքական բլոկի դեմ կռվում են ոչ թե փոքր ժողովուրդների ազատագրման, այլ այդ ժողովուրդներին իրենց գաղութային լծի տակ գցելու համար։ Իր հոդվածներում ու ելույթներում բազմիցս անդրադառնալով մասնավորապես Գալիցիայի և Հայաստանի հարցին, Վ. Ի. Լենինը անխնա մերկացնում էր ցարիզմի նպատակները նրանց նկատմամբ։ Նա ամեն կերպ ձգտում էր ցրել այն պատրանքը, թե իբր ցարիզմը պատերազմի մեջ է մտել գերմանական և թուրքական լծից Գալիցիան և Հայաստանն ազատագրելու և այդ երկրներին ինքնուրույնություն պարգևելու համար։

«Երկրորդ ինտերնացիոնալի կրախը», «Սոցիալիզմը և պատերազմը», «Սեպարատ հաշտության մասին», «Չխեիձեի ֆրակցիան և նրա դերը», «Շրջադարձ համաշխարհային քաղաքականության մեջ», «Նամակներ հեռվից» և շատ այլ հոդվածներում Վ. Ի. Լենինը մերկացնում էր ցարիզմի և այնուհետև բուրժուական ժամանակավոր կառավարության նենգ քաղաքականությունը հայկական հարցում։ Նա նշում էր մասնավորապես հայկական հարցում ցարական կառավարության քաղաքականության պրովոկացիոն բնույթը։ Քաջ իմանալով, որ հայ ժողովուրդը թուրք կառավարող շրջանների կողմից ենթարկվում էր ոչ միայն անլուր հալածանքների, այլև պարբերական կոտորածների և դրա հետևանքով էլ հայկական լայն զանգվածները գերադասում էին ռուսական տիրապետությունը և ձգտում միանալ Ռուսաստանին՝ հույս ունենալով նրա հովանավորության տակ անկախության հասնել, ցարական կառավարությունը սուտ խոստումներով հայկական շրջաններին գրավում էր իր կողմը։

Այնինչ, ինչպես հստակորեն ցույց էր տալիս Վ. Ի. Լենինը, ցարական կառավարությունը ամենևին էլ մտադիր չէր հայերին ոչ միայն անկախություն, այլև ինքնավարության նշույլ անգամ տրամադրելու։ Ցարական կառավարությունը ցանկանում էր նվաճել Արևմտյան Հայաստանը՝ այն ռուսներով վերաբնակեցնելու համար, ինչպես արդեն սկսել էր նրանց վերաբնակեցնել իր իշխանության տակ գտնվող Արևելյան Հայաստանում։ Արևմտյան Հայաստանը, ինչպես բազմիցս նշում էր Վ. Ի. Լենինը, ռուսական ցարիզմին անհրաժեշտ էր որպես մի նոր գաղութ, իսկ ռուսական բուրժուազիային՝ որպես նոր շուկա, ինչպես և որպես գերմանական բուրժուազիայի հետ գործարքի մեջ մտնելու արժեքավոր ապրանք։ Դրա համար էլ պատահական չէր, որ ռուսական բուրժուազիայի ներկայացուցիչները հետադիմական մամուլում հրապարակում էին գերմանական իմպերիալիստների կողմից գաղութային ժողովուրդների ճնշման փաստերը, սակայն ոչ մի խոսք «այն մասին, թե արդյոք և ինչպես կոնկրետ

կապահովվեն դեմոկրատական հիմնարկները բալկանների «նոր» պետություններում կամ Հայաստանում կամ Մոնղոլիայում—այս մասին չեն գրում և չեն խոսում»[8]։

Նույն եղանակով ցարիզմի տապալումից հետո ռուսական բուրժուազիայի ներկայացուցիչները, ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, անգլիական ու ֆրանսիական պետական գործիչներին մեղադրում էին Իռլանդիային և Ալժիրին ազատություն չտալու համար, սակայն իրենք ամենևին էլ չէին գնում «ռուսական Իռլանդիայի ու Ալժիրի»՝ այսինքն՝ Ուկրաինայի, Թուրքեստանի, Հայաստանի ու Ֆինլանդիայի թեկուզ և ինքնորոշման հարցը[9]։

Ելնելով այս հանգամանքներից, Վ. Ի. Լենինը հայկական հարցի լուծումը, այսինքն՝ նրա ազատագրումը օտարերկրյա ճնշումից ու շահագործումից, հնարավոր էր համարում միայն ռուս, հայ, ուկրաինացի և մյուս ժողովուրդների սոցիալական ազատագրության միջոցով։

1917 թ. մայիսին գործարաններից և գնդերից բանվորական և զինվորական դեպուտատների խորհուրդ ընտրվող դեպուտատների համար գրված հրահանգում Վ. Ի. Լենինը նշում էր, որ դեպուտատը պետք է անվերապահ պաշտպանի իմպերիալիստական ավարառողական պատերազմը անհապաղ դադարեցնելու, բոլոր ճնշված կամ անիրավահավասար ազգությունների ազատագրության պահանջը։ «Դա նշանակում է,— գրում էր նա,— վելիկոռուսները բռնորեն չեն պահի ո՛չ Լեհաստանին, ո՛չ Կուրլանդիային, ո՛չ Ուկրաինային, ո՛չ Ֆինլանդիային, ո՛չ Հայաստանին, ընդհանրապես ո՛չ մի ժողովրդի։ Վելիկոռուսները բոլոր ժողովուրդներին առաջարկում են եղբայրական միության և մի ընդհանուր պետության ստեղծում յուրաքանչյուր առանձին ժողովրդի հոժարակամ համաձայնությամբ և ոչ մի դեպքում ոչ ուղղակի կամ անուղղակի բռնության միջոցով»[10]։ Եվ Վ. Ի. Լենինը միանգամայն որոշակի դնում է Հայաստանի լիակատար ինքնորոշման, այսինքն՝ առանձին անկախ պետություն կազմելու հարցը, գրելով. «Այդպիսի հաշտության պայմանների համաձայն վելիկոռուսները պարտավորվում են անհապաղ դուրս բերել զորքերը թե՛ Գալիցիայից, թե՛ Հայաստանից, թե՛ Պարսկաստանից, ինչպես այդ ժողովուրդներին, այնպես էլ ընդհանրապես առանց բացառության բոլոր ժողովուրդներին թողնելով, որ նրանք միանգամայն ազատորեն որոշեն՝ արդյո՞ք իրենք ցանկանում են ապրել առանձին պետության մեջ, թե՞ միութենական պետության մեջ ում հետ ուզենան»[11]։

* * *

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո Վ. Ի. Լենինի գլխավորած խորհրդային կառավարությունը ձեռնամուխ եղավ ազգերի լիակատար ինքնորոշման սկզբունքի իրագործմանը։ Պատերազմող կողմերին առաջարկելով անհապաղ հաշտություն, նա, չնայած բարդ իրադրությանը և խորհրդային հանրապետության ծանր վիճակին, վճռականորեն հռչակեց նախկին ցարական կայսրության մեջ մտնող ժողո-

8 В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 23, էջ 122։
9 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 717—718։
10 Նույն տեղում, էջ 440։
11 Նույն տեղում։

վուրդների ինքնորոշումը։ Ժողովուրդների ինքնուրույնությունը հռչակող առաջին պետական փաստաթղթերից էր «Թուրքահայաստանի» մասին Ժողկոմխորհի դեկրետը, որը Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հրապարակվեց նոր տոմարով 1918 թ. հունվարի 11-ին։

Այդ դեկրետով, որը կազմվել էր Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ, Վ. Տերյանի, Վ. Ավանեսովի և Ի. Ստալինի աշխատակցությամբ, Ժողկոմխորհը հայտարարում էր հայ ժողովրդին Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» ինքնորոշման՝ ընդհուպ մինչև լիակատար անկախության իրավունքի ճանաչումը և անհրաժեշտ էր գտնում մի շարք երաշխիքներ, որոնք կապահովեին ինքնորոշման համար հայ ժողովրդի ազատ հանրաքվեի անցկացումը։ Այդ երաշխիքներն էին՝ ա) բոլոր զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանից» և բնակչության անձնական ու գույքային անվտանգության ապահովման համար հայկական ժողովրդական միլիցիայի ստեղծումը, բ) տարբեր երկրներից հայ փախստականների և գաղթածների անարգել վերադարձը, գ) թուրքերի կողմից պատերազմի ժամանակ երկրի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը հայրենիք, դ) «Թուրքահայաստանում» հայ ժողովրդի դեպուտատների խորհրդի՝ ժամանակավոր ժողովրդական կառավարության ստեղծումը։

Խորհրդային Ռուսաստանը առաջադրում էր «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանների լուծում մերձակա մարզերի դեմոկրատական մարմինների հետ փոխադարձ համաձայնության միջոցով և Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանին լիազորում էր ամեն կերպ օժանդակել բ և գ կետերի կատարմանը, ինչպես և ձեռնարկել ա կետի իրականացման համար հանձնաժողով կազմելուն։

Լենինյան այս դեկրետի իրականացումը կվերացներ դարերի ընթացքում հայ ժողովրդի նկատմամբ եղած անարդարությունը, հնարավորություն կտար թուրքական եղեռնից արյունաքամ ժողովրդի ապրող հատվածներին ի մի հավաքվել հայրենիքում ու ձեռնարկել նոր կյանքի ստեղծման։ Սակայն իմպերիալիստական գիշատիչների նոր ավանտյուրան անհնարին դարձրեց նրա իրականացումը։ Կայզերական Գերմանիան հարձակվեց նորաստեղծ Խորհրդային Ռուսաստանի վրա և, ներքին հակահեղափոխության հետ դաշն կնքելով, պարտադրեց նրան Բրեստ-Լիտովսկի ամոթալի պայմանագիրը։ Այդ հանգամանքից անմիջապես օգտվեց սուլթանական Թուրքիան. վերագրավելով Արևմտյան Հայաստանը, նա իր հրոսակներն ուղղեց Անդրկովկասի վրա։ Այսպիսով թուրքական բռնատիրության կողմից զավթման վտանգի տակ ընկավ հայկական վերջին տերիտորիան։ Ներքին և արտաքին հակահեղափոխության մագիլներում սեղմված Խորհրդային Ռուսաստանն անկարող էր օգնության ձեռք մեկնել Հայաստանին։ Եվ այս բախտորոշ պահին հայ աշխատավոր ժողովուրդը բարձրացավ կենաց և մահու պայքարի և կանգնեցրեց թուրքական հրոսակների առաջխաղացումը։

Սակայն Անդրկովկասում ստեղծված ծանր իրադրության պայմաններում հեղափոխական Ռուսաստանից կտրված Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը ընկան ազգայնական կուսակցությունների՝ մուսավաթականների, մենշևիկների և դաշնակցականների իշխանության տակ, որոնք թեև հռչակեցին այդ երկրների «անկախ» պետականությունը, բայց այդ պետություններն անջատեցին Ռուսաստանից, ավելին, հակադրեցին նրան ու լիակատար կախման

մեջ դրեցին գերմանա-թուրքական և ապա անգլիական, ֆրանսիական ու ամերիկյան իմպերիալիստներից։

Առանձնապես ծանր էր «Հայաստանի անկախ հանրապետության» վիճակը։ Թուրքիայի ձեռքին էր մնում Հայաստանի տերիտորիայի մեծ մասը, մուսավաթական Ադրբեջանն ու մենշևիկյան Վրաստանը ձգտում էին իրենց իշխանության տակ պահել Հայաստանի ծայրագավառները։ Երկրում կուտակվել էր Արևմտյան Հայաստանից գաղթածների և որբերի մի ստվար բանակ։ Սովն ու համաճարակները տասնյակ հազարավոր զոհեր էին տանում։ Կառավարության գլուխ կանգնած դաշնակցական կուսակցության անհեռատես և արկածախնդրական քաղաքականության հետևանքով պատերազմ ծագեց Հայաստանի ու Վրաստանի միջև։ Իսկ այն բանից հետո, երբ դաշնակ ղեկավարները արյունալի սպանդով ճնշեցին 1920 թ. մայիսին հայ աշխատավոր զանգվածների խորհրդային իշխանություն հաստատելու փորձը, Աթաթուրքի գլխավորած թուրքական նոր կառավարության բանակները ներխուժեցին Արևելյան Հայաստան և, գրավելով Կարսն ու Ալեքսանդրապոլը, կրկին հարցականի տակ դրեցին Հայաստանի վերջին հատվածի ինքնուրույն գոյությունը։

Այս օրհասական պահին Հայաստանին և հայ ժողովրդին փրկության ձեռք մեկնեց Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, որը, չնայած դաշնակցական կառավարության բացահայտ հակախորհրդային քաղաքականությանը և Անտանտի ու Դենիկինի հետ դաշինքին, բազմիցս փորձել էր օգնության ձեռք մեկնել։ Եվ դա եղավ Վ. Ի. Լենինի անմիջական նախաձեռնությամբ։

1920 թ. հոկտեմբերի 9-ին հանդես գալով ՌԿ(բ)Կ Մոսկվայի կազմակերպության ակտիվի խորհրդակցությունում, Վ. Ի. Լենինն ասաց. «Թուրքեստանում և Կովկասում դրությունն ավելի բարդ է։ Վերջերս թուրքերը հարձակվել են Հայաստանի վրա, Բաթումը և ապա, գուցե և Բաքուն գրավելու նպատակով։ Հասկանալի է, որ այդ հարցում մենք պետք է հանդես բերենք առավելագույն զգուշություն»[12]։

1920 թ. նոյեմբերի 13-ին Վ. Ի. Լենինը հեռագրով արտահայտում էր իր մտահոգությունը Վրաստանի և Հայաստանի ռազմական ընդհարման առթիվ և հարցնում, թե հնարավո՞ր է, արդյոք, և ի՞նչ հիմքի վրա հասնել Վրաստանի և Հայաստանի հարաբերությունների խաղաղ կարգավորմանը[13]։

1920 թ. նոյեմբերի 27-ին կուսակցության Կենտկոմի քաղբյուրոյի որոշման նախագծում Վ. Ի. Լենինը նշում էր, որ պետք է զգույշ քաղաքականություն վարել Հայաստանի, Վրաստանի, Թուրքիայի և Իրանի նկատմամբ, խուսափել պատերազմից, դեպի այդ երկրները ռազմական արշավանքի խնդիր չդնել[14]։

Թուրքական ներխուժման առաջն առնելու միայն մի ելք կար՝ տապալել դաշնակցական հեղինակազուրկ և անուժ կառավարությունը և հաստատել հայ աշխատավոր զանգվածների իշխանություն, որը դաշինքի մեջ մտներ Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Ադրբեջանի հետ։

Այդ բանն արեցին իրենք՝ հայ աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ։ Եվ երբ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստա-

---

12 В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 41, էջ 339—340։

13 Տե՛ս նույն տեղում, հատ. 52, էջ 9։

14 Տե՛ս նույն տեղում, հատ. 49, էջ 47։

նի բանվորներն ու գյուղացիները հռչակեցին խորհրդային իշխանություն և օգնություն խնդրեցին Խորհրդային Ռուսաստանից, այդ օգնությունը չհապաղեց. Վ. Ի. Լենինի ցուցումով XI կարմիր բանակը օգնության հասավ հայ ժողովրդին դաշնակների ատելի լծից ազատագրելու և թուրք զավթիչներին իր հողի գոնե մի մասից հետ քշելու համար։

Մի փոքր հետո, 1920 թ. դեկտեմբերի 21-ին, խորհուրդների համառուսական XIII համագումարում Վ. Ի. Լենինը թուրքական արշավանքը Հայաստանի դեմ գնահատեց որպես արշավանք Խորհրդային Ռուսաստանի դեմ։ «Թուրքական հարձակումը,— ասաց նա,— հաշվված էր մեր դեմ։ Անտանտը հոր էր փորում մեզ համար և ինքը նրա մեջ ընկավ, որովհետև մենք ստացանք Խորհրդային Հայաստանը»[15]։

Այդ նույն ելույթում Վ. Ի. Լենինը նշեց Թուրքիայում ստեղծված բարդ վիճակը։ «Թուրքիայում վերևում,— ասաց նա,— կանգնած են կադետները, օկտյաբրիստները, նացիոնալիստները, որոնք պատրաստ են մեզ ծախելու Անտանտին։ Բայց դա ծայրահեղորեն դժվար է անել, քանի որ թուրքական ժողովուրդը զայրացած է Անտանտի կողմից ճնշումից և համակրում է Խորհրդային Ռուսաստանին»[16]։

Նորածին Խորհրդային Հայաստանի առաջնահերթ խնդիրը Վ. Ի. Լենինը համարում էր բարեկամական հարաբերությունների հաստատումը հարևան երկրների ու ժողովուրդների հետ, որովհետև առանց այդպիսի հարաբերությունների անհնարին էր հայկական պետության գոյությունը և հայ ժողովրդի խաղաղ կյանքը։ Ստանալով Հայռազմհեղկոմի հեռագիրը Հայաստանում Խորհրդային իշխանություն հաստատելու և Դ. Կ. Օրջոնիկիձեի հեռագիրը՝ Խորհրդային Ադրբեջանի կողմից Խորհրդային Հայաստանին ոչնչացնելու և մի շարք վիճելի տերիտորիաներ նրան հանձնելու մասին, Վ. Ի. Լենինը ողջույնի հեռագիր հղեց Հայռազմհեղկոմին։ «Հանձին ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված Խորհրդային Հայաստանին,— գրել է Վ. Ի. Լենինը,— չեմ կասկածում, որ կգործադրեք բոլոր ջանքերը՝ Հայաստանի, Թուրքիայի. Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու համար»[17]։

* * *

Հայաստանում Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Վ. Ի. Լենինի հետաքրքրությունը հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագրի նկատմամբ ավելի է մեծանում։ Մինչ այդ էլ Վ. Ի. Լենինի ղեկավարած ՌՍՖՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը խիստ մտահոգված էր հայ ժողովրդի, մասնավորապես Ռուսաստանի այլևայլ վայրերում սփռված հարյուրհազարավոր հայ գաղթականների ճակատագրով։ Խորհրդային Ռուսաստանի ազգությունների գործերի ժողկոմատին կից գործող հայկական գործերի կոմիսարիատը վիթխարի գործ էր կատարում հայ գաղթականներին օգնություն հասցնելու, հայերեն լեզվով գրականություն հրատարակելու ու կրթությունը կազմակերպելու ուղղությամբ։ ՌՍՖՍՀ ժողկոմխորհը Վ. Ի. Լենինի նախագահությամբ

15 Նույն տեղում, հատ. 49, էջ 125։
16 Նույն տեղում։
17 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 550։

բազմիցս քննարկել է հայ գաղթականներին ֆինանսական ու պարենային օգնություն ցույց տալու հարցերը։ 1918 թ. հունվարին ԺողԿոմխորհը 6194787 ռուբլի տրամադրեց հայ գաղթականներին օգնելու համար։ Այդ գումարը, սակայն, ճանապարհին բռնագրավվեց սպիտակգվարդիական բանդաների կողմից։ Չնայած հանրապետության տնտեսական և ֆինանսական ծանր վիճակին, ԺողԿոմխորհը Վ. Ի. Լենինի նախագահությամբ 1918 թ. հունիսին կրկին անգամ տրամադրում է այդ գումարը և միջոցառումներ ձեռնարկում այն հայ գաղթականներին հասցնելու համար։

1920 թ. դեկտեմբերին հանդիպելով Ս. Տեր-Գաբրիելյանի հետ, Վ. Ի. Լենինը մի անգամ ևս անդրադառնում է հայ գաղթականության հարցին։ ԱրտգործԺողկոմ Գ. Չիչերինին ուղղված գրությամբ նա դնում է կործանման եզրին գտնվող 600000 հայ գաղթականներին ամեն կերպ օգնելու հարցը[18]։

Վ. Ի. Լենինը անձամբ հետաքրքրվում էր Հայաստանի վիճակով և կոնկրետ քայլեր կատարում ազատագրված հայ ժողովրդին սովից ու տնտեսական քայքայումից փրկելու համար։ Մասնավորապես 1921 թ., երբ Հայաստանում վիճակը արտակարգ ծանր էր, նա ՌՍՖՍՀ պարենԺողկոմատին և Կովկասի ղեկավար մարմիններին հանձնարարություններ է տալիս Հայաստանին օգնելու վերաբերյալ։ Նրա նախաձեռնությամբ Խորհրդային Հայաստանին տրամադրվում է վալյուտա՝ Իրանում սերմացու և բանող անասուններ գնելու համար, Ռուսաստանից և Ադրբեջանից Հայաստան են առաքվում հաց, շաքար, աղ, կտորեղեն, նավթ և այլ մթերքներ։ 1921 թ. ապրիլին Վ. Ի. Լենինը հեռագրով հանձնարարում է Գ. Կ. Օրջոնիկիձեին վճռական միջոցներ ձեռնարկել Բաքվի և Հայաստանի ու Վրաստանի մատակարարման համար[19]։

Անցյալում ճնշված ու հետամնաց բոլոր հանրապետությունների, այդ թվում և Հայաստանի նկատմամբ Վ. Ի. Լենինը հետևողականորեն կիրառում էր կուսակցության ազգային քաղաքականության հիմնական սկզբունքը՝ համեմատաբար ավելի առաջ գնացած ազգերի օգնությամբ նրանց քաղաքական, տնտեսական ու մշակութային ավելի արագ զարգացման միջոցով ոչ միայն իրավական, այլև փաստական հավասարություն հաստատելու սկզբունքը։ Դեռևս Ռուսաստանի խորհուրդների VIII համագումարում, ողջունելով Բուխարայի, Ադրբեջանի ու Հայաստանի խորհրդային հանրապետությունների կազմվելն ու ամրապնդվելը, նա նշեց, որ դրանք հիմնականում գյուղացիական երկրներ են։

Մի քանի ամիս հետո Ալ. Մյասնիկյանի միջոցով Կովկաս ուղարկված «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» նամակում Վ. Ի. Լենինը նշեց Խորհրդային Ռուսաստանի ու կովկասյան խորհրդային հանրապետությունների վիճակների հիմնական տարբերությունները։ Խորհրդային Ռուսաստանը ոչ ոքից ռազմական և տնտեսական օգնություն չէր ստանում, իսկ կովկասյան հանրապետությունների թիկունքում կանգնած էր Խորհրդային Ռուսաստանը։ Կովկասյան հանրապետություններն ավելի գյուղացիական երկրներ էին, քան Ռուսաստանը, դրա համար էլ նրանք պետք է աշխատեին «իսկույն բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշ-

18 Տե՛ս В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 52. էջ 33։
19 Տե՛ս նույն տեղում, էջ 147։

խատանքներ։ Ոռոգումն ամենից ավելի պետք է,— նշում էր նա,— և ամենից ավելի կվերաստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[20]։ Ռուսաստանը զրկված էր մյուս երկրների հետ առևտրի և փոխանակման հնարավորություններից, իսկ կովկասյան երկրները կարող էին ավելի արագ և ավելի հեշտ ապրանքափոխանակություն և «համակեցություն» գլուխ բերել կապիտալիստական Արևմուտքի հետ և դրանով իսկ իրենց մոտ արագացնել ժամանակակից արդյունաբերության ծավալումը։

Այդ գործում կովկասյան հանրապետություններին անգնահատելի օգնություն ցույց տվեց Խորհրդային Ռուսաստանը։ Բավական է նշել, որ Վ. Ի. Լենինի անմիջական ցուցումով կենտրոնական Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնների մի շարք գործարաններ իրենց ամբողջ սարքավորումներով տեղափոխվեցին նախկին ծայրամասերը։ Մասնավորապես, քսանական թվականների սկզբին Իվանովո-Վոզնեսենսկից Հայաստան տեղափոխվեց մի ամբողջ տեքստիլ կոմբինատ, որը դարձավ Խորհրդային Հայաստանի նոր արդյունաբերության առաջնեկը՝ այժմյան Լենինականի Մայիսյան ապստամբության սնվան տեքստիլ կոմբինատը։

Վ. Ի. Լենինը նշանակալի ավանդ ունի նաև ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի մշակութային վերածննդի գործում։ 1919 թ. մարտի 4-ին նա ստորագրեց «Դեկրետ Մոսկվայում գտնվող հայկական ինստիտուտի մասին», որով արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի ամբողջ ունեցվածքը հանձնվեց հայկական միջնակարգ դպրոցից և հայերեն ու ռուսերեն դասավանդումով պատմա-բանասիրական և սոցիալ-տնտեսական ֆակուլտետներից կազմվող հայկական ինստիտուտին։ Այդ ինստիտուտը հետագայում դարձավ Մոսկվայի հայ մշակույթի տունը և խոշոր գործ կատարեց հայ նոր մշակույթի զարգացման գործում։

Անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների համար Վ. Ի. Լենինը գնում էր մտավորականության և մանր բուրժուազիայի, հատկապես գյուղացիության նկատմամբ ավելի շրջահայաց ու զիջողական քաղաքականություն վարելու հարցը։ «Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ,— գրում էր նա,— ահա թե ինչ է հնարավոր ու անհրաժեշտ Կովկասի հանրապետությունների բոլշևիկների համար՝ ի տարբերություն ՌՍՖՍՀ-ի»[21]։

Մեծ առաջնորդը քաջ գիտեր Անդրկովկասի ժողովուրդների փոխհարաբերությունները, գիտեր, թե որքան վնաս ու արցունք էին բերել նրանց շահագործողների ու ազգայնական կուսակցությունների սերմանած երկպառակությունները ու հակադրությունը։ Դրա համար էլ անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների ազատ ու սոցիալիստական զարգացման կարևորագույն պայմաններից մեկը նա համարում էր նրանց ամենալայն համագործակցությունը կյանքի բոլոր բնագավառներում, նրա միասնությունն ու սերտ դաշինքը։ Նա նշում էր, որ այդ դաշինքը «կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[22]։

---

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 404։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում, էջ 402։

Վ. Ի. Լենինի անձնական նախաձեռնությամբ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորները 1922 թ. մարտին ստեղծեցին այդ դաշինքը պետականորեն ձևակերպող Անդրկովկասյան ֆեդերացիան, որը վիթխարի դեր խաղաց անդրկովկասյան ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու մշակութային ջանքերի միավորման, նրանց համերաշխության ու եղբայրական բարեկամության հաստատման գործում և բարի հիշատակ թողեց այդ ժողովուրդների սրտում։ Իսկ երբ 1922 թ. դեկտեմբերին ստեղծվեց բոլոր խորհրդային հանրապետությունների պետական դաշնակցությունը՝ Խորհրդային Միությունը, Անդրֆեդերացիան դարձավ նրա հիմնադիր անդամներից մեկը և Հայաստանն իր բախտն անխզելիորեն ու հավերժ կապեց ժողովուրդների այդ մեծ դաշինքի հետ։

Ժողովուրդների լենինյան այդ դաշինքից թերևս բոլորից առավել օգուտ քաղեց հայ ժողովուրդը՝ և՛ իր ուղղակի գոյությունը, և՛ իր ապագան ապահով ու աներկբա դարձնելու տեսակետից։ Այդ եղբայրական միության շնորհիվ հայ ժողովուրդը փրկվեց ֆիզիկական բնաջնջումից, ավելին՝ իսկապես վերածնվեց, կարողացավ աշխարհով մեկ սփռված իր բազմաթիվ որդիների տունդարձը ապահովել, կանգնել աշխարհի ամենաղարգացած ու առաջավոր ժողովուրդների շարքում և ի տես աշխարհի բարձրացնել իր դարավոր ու այսօր ստեղծած գանձերը։

* * *

Լենինյան հանճարը կանխագծեց մեր երկրի բոլոր ճնշված ու գաղութակալված, ի թիվս նրանց և հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության միակ ճիշտ ուղին և ղեկավարեց նրանց նոր, սոցիալիստական կյանքի ու վերածննդի պատմական պրոցեսը։ Ծանր ու խստաշունչ օրերին վիթխարի երկրի ու ամբողջ համաշխարհային հեղափոխական շարժման ղեկի մոտ կանգնած առաջնորդը ժամանակ էր գտնում բազմաթիվ ժողովուրդների բախտով ու նրանց կյանքի կոնկրետ հարցերով զբաղվելու համար։ Այդ ժողովուրդներից մեկն էր հայ ժողովուրդը, որն իր այսօրվա պայծառ իրականությամբ, աշխարհի կենսունակ ու զարգացող, համաշխարհային զարգացումը կողմնորոշող ազգերի շարքում գտնվելու համար շատ ու շատ բանով պարտական է մեծ Լենինի իմաստուն մտքին և մարդկային խոր հոգատարությանը։ Դրա համար էլ հայ ժողովուրդը նրան մեծարում է որպես իր մեծագույն բարեկամի, իր իսկական ազատարարի։